ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/36

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Եսայանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1449-2022 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.01.2022թ.-ի 1/18-2/3720-2022 գրության հիման վրա, 27.01.2022թ.-ին «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.01.2022թ.-ին:

01.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/36 համարի ծածկագիրը:

10.02.2022թ.-ին և 28.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2022թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 20.01.2022թ.-ի 1/18-2/3720-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իր կարիքների համար կազմակերպել է ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկ¬ման ծառայությունների ձեռքբերման գնման գործընթաց, որի արդյունքում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և պատվիրատուն սահմանված կարգով ընտրված մասնակցին ներկայացրել է առաջարկ՝ պայմանագիր կնքելու համար, սակայն սահմանված

անգործության ժամկետը լրանալուց հետո «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1449-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն 03.02.2022թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1449-2022 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ:

Սույնով հայտնում ենք, որ նախաձեռնված ընթացակարգը ոչ իրավաչափ է և ենթակա է մերժման հետևյալ հիմքերով և հիմնավորումներով.

21.12.2021 թվականի թիվ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Այթիռեսուրսիս» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն անգործության ժամկետ սահմանվել է 10 օր: Սահմանված ժամկետի ավարտից հետո Պատվիրատուն պարտավորվել է ծանուցել ընտրված մասնակցին՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ 1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հողվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ցանկանում ենք արձանագրել, որ Ընկերությունը՝ Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով, չի ստացել համապատասխան ծանուցում և պայմանագրի նախագիծ, և հետևաբար չէր կարող իրացնել իր իրավունքը:

Ստացվում է, որ Ընկերությունը թույլ չի տվել որևէ խախտում և չէր կարող կնքել որևէ պայմանագիր այն պարագայում, երբ պայմանագիր կնքելու ծանուցում և հենց պայմանագրի նախագիծը պատշաճ կերպով չի ուղարկվել հաղթող մասնակցին:

Հիմք ընդունելով վերը նշվածը, պնդում ենք բացակայում է հիմքեր՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Այթիռեսուրսիս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը 15.02.2022թ.-ի ներկայացրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ՍՑ-ԼՕ-2022/36 27.01.2022թ.-ին նախաձեռնված ընթացակարգը՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Այթիռեսուրսիս» ՍՊ ընկերությունը արդեն իսկ ներկայացրել է դիրքորոշում՝ պնդելով, որ Պատվիրատուի կողմից չի ուղարկվել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ուստի Ընկերությունը թույլ չի տվել որևէ խախտում, հետևաբար նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման:

Սույնով նաև ներկայացնում ենք վերծանումներ կայքից, որը հաստատում է, որ Ընկերությունը չի ստացել Պատվիրատուից որևէ առաջարկ սահմանված ժամկետում:»:

4. <u>ՍՑ-LO-2022/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.12.2021թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.12.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն:

v. 22.12.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. Պատվիրատուն eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ ընկերության հետ կարող է կնքվել պայմանագիր «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում՝ խնդրելով հրավերով նշված սահմանված ժամկետներում պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները և մասնակցի կողմից ստորագրված պայմանագրի օրինակը, կամ մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:

vii. Հանձնաժողովի 19.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումը, ուստի համաձայն «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 9.3 կետի՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարել չկայացած:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1449-2022 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման

դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի

ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.12.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված Պատվիրատուն eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ ընկերության հետ կարող է կնքվել պայմանագիր «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում: Սակայն Հանձնաժողովի 19.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումը, ուստի համաձայն «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 9.3 կետի՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է «ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարել չկայացած:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական

որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, ուսումնասիրելով գործում առկա փաստերին ու Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ թե Մասնակցին ուղարկված ծանուցման և թե eauction.armeps.am համակարգից արված արտատպման մեջ առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե երբ է Մասնակցին ուղարկվել պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցումը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ընթացակարգի քննության ընթացքում Հանձնաժողովի և/կամ Պատվիրատուի կողմից Բողոքներ քննող անձին չներկայացվեցին բավարար և վերաբերելի ապացույցներ առ այն, որ Մասնակցին ուղղված պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով սահմանված ժամկետների պահպանմամբ:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Սույն դեպքում, որպես որոշակի ապացույց, ինչպես վերը նշվեց, Հանձնաժողովի և/կամ Պատվիրատուի կողմից չի ներկայացվել Մասնակցի կողմից ներկայացված առարկությունների հիմքում դրված փաստական հանգամանքները հերքող/ժխտող բավարար և վերաբերելի ապացույց:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է, ուստի, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.01.2022թ.-ի թիվ 26/26-1/1449-2022 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/36 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**